

Եղվարդի խճուղի 01
Երևան 0054, Հայաստան
+37410-36-81-44
e-mail: info@armnewstv.am
web: www.armnewstv.am




ԱՐՄՆՅՈՒԶ
լրատվական
հեռուստաալիք

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնայոդովի
Նախագահ պարոն Գ. Ամալյանին

Հիմք ընդունելով ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի դրույթները և ապահովելով թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրությունների մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար ոչ խտրական պայմաններ՝ «ԱրմՆյուզ» հեռուստաընկերությունը հրապարակում է ՀՀ Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 6-ին կայանալիք ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում թեկնածուներին, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին տրամադրվող եթերաժամի մասին տեղեկատվությունը:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում թեկնածուներին, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին տրամադրվող վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանվում է 18 000 /տասնութ հազար/ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Յուրաքանչյուր թեկնածուին, կուսակցությանը կամ կուսակցություններին դաշինքին, նախընտրական քարոզչության ամբողջ ժամանակահատվածում, ամեն օր ժամը 18:00-ից մինչև 20:00, կարող է տրամադրվել առավելագույնը 6 րոպե եթերաժամանակ:

Գործադիր տնօրեն  Երևան Թերզանյան